

ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



2026 (1-ին ԿԻՍԱՄՅԱԿ)

Քաղաքացիական գործերով իրավական դիրքորոշումներ

Վճռաբեկ դատարանի թիվ ՀԿԴ/0156/02/23 քաղաքացիական գործով որոշում.

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանն անդրադարձել է գործարքի անվավերության՝ աճուրդն անվավեր ճանաչվելու և ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում դրամական հատուցման ենթակա գույքի արժեքի որոշման առանձնահատկություններին:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, միաժամանակ զարգացրել և հստակեցրել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի կիրառման չափանիշները՝ անվավեր գործարքով ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում դրամական հատուցման ենթակա գույքի արժեքի որոշման վերաբերյալ:
- Վճռաբեկ դատարանը նշել է, որ երկկողմանի ռեստիտուցիայի նպատակն է հնարավորինս վերականգնել այն իրավական և փաստական վիճակը, որն առկա էր մինչև անվավեր գործարքի կնքումը: Այդ պատճառով, եթե գույքը բնեղենով վերադարձնել հնարավոր չէ, ապա պետք է հատուցվի ոչ թե գույքի արժեքը գործարքն անվավեր ճանաչելու պահին, այլ այն իրական (շուկայական) արժեքը, որն այն ունեցել է գործարքի կնքման պահին:
- Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ անվավեր գործարքով նախատեսված պայմանագրային գինը ինքնին չի կարող համարվել հատուցման ենթակա արժեքի որոշման հիմք: Պատճառն այն է, որ գործարքի անվավերությունը իրավական հետևանքներ է առաջացնում դրա կնքման պահից, ուստի անվավեր պայմանագրի պայմանները, ներառյալ՝ գինը, չեն կարող ինքնաբերաբար ընդունվել որպես կողմերի միջև պարտադիր համաձայնություն ու ենթակա լինել ռեստիտուցիայի:
- Վճռաբեկ դատարանը նաև նշել է, որ գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում հատուցման ենթակա գույքի իրական (շուկայական) արժեքը հանդիսանում է ինքնուրույն ապացուցման ենթակա փաստ: Հետևաբար դատարանը պարտավոր է պատշաճ բաշխել ապացուցման պարտականությունը և դատավարական օրենքով նախատեսված ապացույցների հիման վրա պարզել գույքի իրական շուկայական արժեքը հենց գործարքի կնքման պահի դրությամբ:

Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ/4466/02/23 քաղաքացիական գործով որոշում.

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանը սույն գործով անդրադարձել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 715-րդ հոդվածի կիրառելիության հարցին, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնության վավերության պայմանները որոշելու առանձնահատկություններին:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Սույն գործով Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 781-րդ հոդվածով կապալի մասին ընդհանուր դրույթները ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերի նկատմամբ կիրառվում են սուբսիդիար կարգով՝ միայն այն չափով, որքանով դրանք չեն հակասում ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրին վերաբերող հատուկ նորմերին կամ այդ պայմանագրի առանձնահատկություններին: Քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի 1-ին կետը պատվիրատուի կողմից ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրից հրաժարվելու դեպքում կատարողին իրավունք է վերապահում պահանջել բացառապես փաստացի կատարած ծախսերի վճարումը, նույն օրենսգրքի 715-րդ հոդվածը, որը նախատեսում է նաև վնասների հատուցման պահանջ, ծառայությունների մատուցման հարաբերությունների նկատմամբ կիրառելի չէ:
- Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ տուժանքի կիրառման պարտադիր նախապայմանը պարտապանի կողմից պայմանագրային պարտավորության խախտումն է, իսկ տուժանքով կարող է ապահովվել բացառապես իրական պահանջը: Հետևաբար, տուժանք չի կարող սահմանվել պարտավորության կողմի իրավաչափ վարքագծի, այդ թվում՝ օրենքով կամ պայմանագրով վերապահված սուբյեկտիվ իրավունքի իրականացման համար: Քանի որ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրից հրաժարվելը պատվիրատուի օրենքով երաշխավորված իրավունք է, այդ իրավունքի իրացման համար տույժ կամ տուգանք նախատեսող պայմանը հակասում է օրենքին և կարող է վիճարկվել, սակայն դատարանը սեփական նախաձեռնությամբ իրավասու չէ նման պայմանը ճանաչել անվավեր: Այդպիսի պայմանը վիճահարույց է և շարունակում է առաջացնել իրավական հետևանքներ, քանի դեռ դրա վավերությունը պատշաճ կարգով չի վիճարկվել:

- Վճռաբեկ դատարանը նաև մեկնաբանել է տուժանքի ինստիտուտը՝ տարանջատելով դրա երկու տեսակների՝ տուգանքի և տույժի իրավական բնույթը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ տուգանքը կայուն դրամական գումար է, որը պարտապանը միանվագ վճարում է պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում և կարող է ապահովել ինչպես դրամական, այնպես էլ ոչ դրամական պարտավորությունների կատարումը: Ի տարբերություն դրա՝ տույժը աճողական դրամական գումար է, որը հաշվարկվում է պարտավորության կատարման կետանցի յուրաքանչյուր ժամանակահատվածի համար: դրամական պարտավորությունների դեպքում այն արտահայտվում է տոկոսային հարաբերակցությամբ, իսկ ոչ դրամական պարտավորությունների դեպքում՝ պայմանագրով սահմանված յուրաքանչյուր ժամանակահատվածի համար կայուն դրամական գումարով:
- Այս տարանջատման հիման վրա Վճռաբեկ դատարանը հստակեցրել է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի կիրառության սահմանները՝ նշելով, որ պայմանագրով որոշված տույժի տարեկան առավելագույն չափի սահմանափակումը կիրառելի է բացառապես դրամական պարտավորություն ապահովող տույժի նկատմամբ, իսկ պայմանագրով որոշված բոլոր տուժանքների հանրագումարի՝ հիմնական պարտքի չափը չգերազանցելու պահանջը վերաբերում է միայն այն տուժանքներին, որոնցով ապահովվում է դրամական պարտավորությունը: Եթե տուժանքը սահմանվել է դրամական պարտավորության հետ անմիջականորեն չկապված պայմանագրային այլ պարտավորության ապահովման նպատակով, ապա նշված սահմանափակումները կիրառելի չեն:

Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/24943/02/20 քաղաքացիական գործով որոշում.

- **Քննարկման ենթակա հարցը.** Սույն գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանը անդրադարձել է այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը բավարար իրավական երաշխիքներ է սահմանում՝ խախտված ոչ նյութական իրավունքների պաշտպանության միջոցների ընտրության հարցում, մասնավորապես՝ արդյո՞ք անձը կարող է, հրաժարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածով նախատեսված հատուկ միջոցներից, օգտվել նույն օրենսգրքի 14-րդ և 162-րդ հոդվածներով սահմանված ընդհանուր պաշտպանության միջոցներից, թե՞ առկա են կիրառման ենթակա օրենսդրորեն կանխորոշված և սահմանափակ պաշտպանության միջոցներ:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձի ոչ նյութական իրավունքների պաշտպանության համար ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է միմյանց փոխլրացնող պաշտպանության ընդհանուր և հատուկ միջոցներ: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական իրավունքների պաշտպանության ընդհանուր եղանակները, որոնք կիրառելի են նաև ոչ նյութական իրավունքների խախտման դեպքում, իսկ 162-րդ հոդվածը նախատեսում է ոչ նյութական բարիքների պաշտպանության հնարավորությունը, այդ թվում՝ այն դեպքերում, երբ քաղաքացիական իրավունքների պաշտպանության ընդհանուր եղանակների կիրառումը բխում է խախտված ոչ նյութական իրավունքի էությունից և խախտման հետևանքների բնույթից: Ի տարբերություն դրանց՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը հատուկ իրավական նորմ է, որը կարգավորում է պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության միջոցները վիրավորանքի կամ զրպարտության դեպքերում՝ նախատեսելով, մասնավորապես, հերքման, ներողության և փոխհատուցման պահանջի ներկայացման հնարավորությունը:
- Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը ոչ նյութական իրավունքների պաշտպանությունը չի սահմանափակել բացառապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածով նախատեսված հատուկ կարգավորումներով: Շահագրգիռ անձն իրավունք ունի սեփական հայեցողությամբ չօգտվել այդ հոդվածով նախատեսված հատուկ պաշտպանության միջոցներից և փոխարենը ընտրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ և 162-րդ հոդվածներով նախատեսված ընդհանուր պաշտպանության միջոցները, եթե դրանք տվյալ իրավահարաբերության պայմաններում առավել արդյունավետ են ապահովում խախտված իրավունքի պաշտպանությունը:
- Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հստակեցրել է, որ շահագրգիռ անձը կարող է ընտրել ընդհանուր պաշտպանության միջոցները, եթե՝ **(1)** իրավունքի խախտումը, ըստ շահագրգիռ անձի, չի հանգեցրել նյութական վնասի, և ոչ նյութական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ և 162-րդ հոդվածներով նախատեսված կանխարգելիչ միջոցներով, մասնավորապես՝ իրավունքը խախտող տեղեկատվությունը հեռացնելուն պարտավորեցնելու միջոցով, **(2)** շահագրգիռ անձի հիմնական նպատակն է կանխել կամ դադարեցնել ոչ նյութական իրավունքը խախտող տեղեկատվության տարածումը՝ առանց այն տարածող անձի համար լրացուցիչ իրավական պարտականություններ սահմանելու, **(3)** իրավախախտումը կրում է շարունակական բնույթ, **(4)** խախտման էությունը դուրս է գլուտ վիրավորանքի կամ զրպարտության շրջանակից և առնչվում է նաև այլ ոչ նյութական իրավունքների, այդ թվում՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության կամ անձնական տվյալների պաշտպանության խախտմանը, **(5)** ընտրված ընդհանուր պաշտպանության միջոցն առավել համապատասխանում է խախտված իրավունքի վերականգնման նպատակին, քան ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածով նախատեսված հատուկ պաշտպանության միջոցները:
- Վճռաբեկ դատարանը նաև ընդգծել է, որ այն հանգամանքը, որ հայցվորը հայցադիմումում օգտագործել է «զրպարտություն» կամ «վիրավորանք» եզրույթները, ինքնին չի պարտադրում դատարանին վեճը քննել բացառապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի շրջանակներում: Դատարանը

պարտավոր է գնահատել հայցադիմումի փաստական և իրավական հիմքերը՝ ելնելով ներկայացված պահանջի բովանդակային էությունից և ապահովելով ոչ թե ձևական, այլ իրական և արդյունավետ դատական պաշտպանություն:

Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/24943/02/20 քաղաքացիական գործով որոշում.

- **Քննարկման ենթակա հարցը.** Սույն գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանը անդրադարձել է՝ **(1)** պայմանագիրը չկատարելու կամ մասնակիորեն կատարելու հիմքով այն միակողմանի լուծելու դեպքում այդ պայմանագրի մյուս կողմի կողմից դրանից բխող պարտավորություններն անհաղթահարելի ուժի հետևանքով դադարած ճանաչելու մասին պահանջ ներկայացնելու իրավական հնարավորության հարցին, **(2)** երաշխիքի՝ որպես պարտավորության կատարման ապահովման եղանակի առանձնահատկություններին այն դեպքում, երբ հիմնական պարտավորությունը կարող է համարվել դադարած անհաղթահարելի ուժի հետևանքով:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Առաջին հարցի առնչությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պայմանագրի մյուս կողմի կողմից պայմանագիրը էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ հիմքով միակողմանի լուծվելու և դրանով ստանձնած պարտավորություններն օրենքի ուժով դադարելու հանգամանքն ինքնին չի բացառում պայմանագրի էական ենթադրյալ խախտում թույլ տված անձի իրավունքը՝ դատարանում պահանջ ներկայացնելու նույն պայմանագրից բխող պարտավորություններն անհաղթահարելի ուժի հետևանքով դադարած ճանաչելու վերաբերյալ: Վճռաբեկ դատարանը հիմնավորել է, որ պայմանագրի լուծման և պարտավորությունների անհաղթահարելի ուժի հետևանքով դադարման իրավական հետևանքները տարբեր են: Եթե պայմանագիրը լուծվում է պայմանագրի էական խախտման հիմքով, ապա մյուս կողմը կարող է պահանջել պայմանագրի լուծմամբ պատճառված վնասների հատուցում, մինչդեռ անհաղթահարելի ուժի հետևանքով պարտավորության դադարման դեպքում պարտապանն ազատվում է պատասխանատվությունից: Հակառակ մոտեցումը կարող է վտանգել անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը:
- Երկրորդ հարցի առնչությամբ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ երաշխիքի պարտավորության ինքնուրույնության և հիմնական պարտավորությունից անկախության սկզբունքը բացարձակ բնույթ չունի: Այն կիրառելի է բացառապես երաշխիք տված անձի և բենեֆիցիարի հարաբերություններում և որևէ կերպ չի ազդում երաշխիքի՝ հիմնական պարտավորության նկատմամբ ակցեսոր բնույթի վրա: Երաշխիքի ինքնուրույնությունն ու հիմնական պարտավորությունից անկախությունն արտահայտվում են նրանով, որ երաշխիք տված անձը բենեֆիցիարի՝ երաշխիքի պայմաններին համապատասխան ներկայացված պահանջը պարտավոր է կատարել անվերապահորեն և, ի տարբերություն երաշխավորի, իրավասու չէ մերժել այն՝ վկայակոչելով հիմնական պարտավորության հետ կապված հանգամանքներ:
- Միաժամանակ Վճռաբեկ դատարանը նշել է, որ երաշխիքի ինքնուրույնությունն ու հիմնական պարտավորությունից անկախությունն ամենևին չեն նշանակում, որ երաշխիք տված անձը պարտավոր է կատարել բենեֆիցիարի վճարման պահանջը՝ անկախ հիմնական պարտավորությունը դատական կարգով դադարած ճանաչելու հիմքից: Եթե մինչև երաշխիքից բխող վճարման պահանջի կատարումը հիմնական պարտավորությունը դատական կարգով ճանաչվում է դադարած այնպիսի հիմքով, որը կապված չէ հիմնական պարտապանի կողմից պարտավորության խախտման հետ, այդ թվում՝ անհաղթահարելի ուժի առկայության հիմքով, ապա, հաշվի առնելով, որ այդ դեպքում պարտատիրոջ մոտ բացակայում է պարտապանից կատարում պահանջելու իրավունքը, երաշխիքը, որը տրվել է ի ապահովումն հիմնական պարտավորության պատշաճ կատարման, կորցնում է իր կանխարգելիչ և վերականգնողական նշանակությունը, իսկ երաշխիքից բխող պարտավորությունը ևս պետք է համարել դադարած:

Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/17265/02/22 քաղաքացիական գործով որոշում.

- **Քննարկման ենթակա հարցը.** Սույն գործով Վճռաբեկ դատարանը դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում անդրադարձել է գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով գործի վարույթը կարճելու իրավական հնարավորությանն այն դեպքերում, երբ իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման կողմից ներկայացված և դատարանի որոշմամբ վարույթ ընդունված հայցադիմումում որպես հայցվոր նշված է իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանումը:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավաբանական անձի ներկայացուցչության կամ մասնաճյուղի ղեկավարը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով չի հանդիսանում իրավաբանական անձի ի պաշտոնե ներկայացուցիչ և քաղաքացիական շրջանառությունում հանդես է գալիս իրավաբանական անձի կողմից տրված լիազորության հիման վրա: Վճռաբեկ դատարանը նշել է, որ իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման ղեկավարի՝ իրավաբանական անձի անունից դատարանում կամ այլ անձանց առջև հանդես գալու լիազորության առկայությունը հավաստող անհրաժեշտ և բավարար փաստաթուղթ կարող է հանդիսանալ ոչ միայն առանձին լիազորագիրը, այլև առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունը, որով նախատեսված է իրավաբանական անձի շահերը ներկայացնելու և դրանց պաշտպանությունն իրականացնելու իրավասությունը, պայմանով, որ ներկայացված է նաև առանձնացված ստորաբաժանման ղեկավարի պաշտոնական

-
- կարգավիճակը հավաստող փաստաթուղթ: Առանձին լիազորագրի ներկայացումն անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ նշված իրավասությունը նախատեսված չէ առանձնացված ստորաբաժանման կանոնադրությամբ:
 - Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ այն դեպքերում, երբ հայցադիմումը ներկայացվել է իրավաբանական անձի ներկայացուցչության կամ մասնաճյուղի կողմից, որի կանոնադրությամբ կամ ղեկավարին տրված լիազորագրով նախատեսված է իրավաբանական անձի շահերը ներկայացնելու և դրանց պաշտպանությունն իրականացնելու իրավասությունը, անկախ նրանից, թե հայցադիմումում որպես հայցվոր նշված է իրավաբանական անձը, թե նրա առանձնացված ստորաբաժանումը, այն պետք է դիտարկվի որպես իրավաբանական անձի անունից, ի շահ իրավաբանական անձի և վերջինիս իրավունքների պաշտպանության նպատակով ներկայացված հայց: Հետևաբար, նման հայցադիմումի ընդունումը չի կարող մերժվել կամ գործի վարույթը կարճվել այն հիմքով, որ գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով:

Վճռաբեկ դատարանի թիվ ՍնԴ/0719/04/22 քաղաքացիական գործով որոշում.

- Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանը անդրադարձել է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը գերազանցող տուժանքի տարեկան առավելագույն չափի նախատեսող կամ պայմանագրով որոշված բոլոր տուժանքների հանրագումարի չափը տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը գերազանցելուն հանգեցնող պայմաններ պարունակող համաձայնության առոչնչության հարցին:
- Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ եթե պայմանագրով նախատեսված տուժանքը գերազանցում է օրենքով թույլատրելի առավելագույն սահմանը (տարեկան՝ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը) կամ եթե պայմանագրով նախատեսված բոլոր տուժանքների հանրագումարը գերազանցում է տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը, ապա առոչինչ է ոչ թե տուժանքի մասին ամբողջ համաձայնությունը, այլ միայն այն մասը, որը գերազանցում է օրենքով թույլատրելի սահմանը: Վճռաբեկ դատարանը նշել է, որ տուժանքի մասին համաձայնությունը կարող էր կնքվել նաև առանց օրենքի իմպերատիվ պահանջներին հակասող այդ մասի, ուստի հիմքեր չկան համաձայնությունը ամբողջությամբ անվավեր ճանաչելու: Հակառակ մոտեցման դեպքում պարտավորությունը խախտած անձն ընդհանրապես կազատվեր տուժանք վճարելու պարտականությունից, ինչը կիմաստազրկեր տուժանքի ինստիտուտը՝ որպես պարտավորությունների կատարման ապահովման միջոց, և կվտանգեր քաղաքացիական շրջանառության կայունությունը:

Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/6739/02/23 քաղաքացիական գործով որոշում.

- Քննարկման ենթակա հարցը.** սույն գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանը անդրադարձել է պայմանագիրը փոփոխելու և լուծելու համաձայնության օրենքով կամ պայմանագրով նախատեսված ձևական պահանջների խախտման իրավական հետևանքներին, ինչպես նաև ապացուցման պարտականություն կրող գործին մասնակցող անձի վկայակոչած փաստը գործի քննության ընթացքում գործին մասնակցող մյուս անձի կամ նրա ներկայացուցչի կողմից ընդունելու արդյունքում անվիճելի դառնալու առանձնահատկություններին:
 - Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու վերաբերյալ համաձայնության համար նախատեսված հասարակ գրավոր ձևը չպահպանելը ինքնին չի հանգեցնում այդ համաձայնության անվավերությանը, եթե օրենքով կամ կողմերի համաձայնությամբ նման հետևանք ուղղակիորեն նախատեսված չէ: Հետևաբար, եթե գործով թույլատրելի ապացույցներով հաստատվում է, որ կողմերը փաստացի համաձայնության են եկել պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու վերաբերյալ, ապա այդ համաձայնությունն առաջացնում է կողմերի նախատեսած իրավական հետևանքները՝ անկախ նրանից, որ չի պահպանվել օրենքով կամ հիմնական պայմանագրով նախատեսված ձևը: Այդ դեպքում պայմանագիրը կամ դրա համապատասխան պայմանը համարվում է փոփոխված կամ լուծված՝ կողմերի համաձայնության ձեռքբերման պահից:
 - Վճռաբեկ դատարանը** նաև հստակեցրել է, որ եթե գործին մասնակցող անձը առաջին աստիճանի դատարանում դատավարական փաստաթղթով, դատական նիստում կամ ցուցմունք տալու ընթացքում ընդունել է որևէ փաստ, ապա այդ փաստը կարող է վիճելի ճանաչել միայն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում: Դատարանն իրավասու չէ այլ հիմքերով այդ փաստը կրկին դարձնել ապացուցման ենթակա, այդ թվում՝ եթե հետագայում նույն անձը հրաժարվում է իր կողմից ընդունված փաստից և ներկայացնում հակառակ պնդումներ: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, հենց այս կերպ է դրսևորվում փաստի ընդունման տնօրինչական բնույթը:
-

Վարչական գործերով իրավական դիրքորոշումներ

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/7491/05/22 վարչական գործով որոշում.

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ բանկերի լուծարային գործընթացում բանկային պարտավորությունների մարման ժամանակ հարկային իրավահարաբերությունների դրսևորման որոշակի առանձնահատկություններին:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ լուծարման գործընթացում գտնվող բանկի աշխատավարձային պարտավորությունները մարելիս աշխատավարձ ստացող ֆիզիկական անձն է եկամտային հարկ վճարելու պարտականություն կրող սուբյեկտը, իսկ բանկը՝ ի դեմս լուծարային կառավարչի, հանդես է գալիս միայն որպես հարկային գործակալ՝ հաշվարկված եկամտային հարկը պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտականությամբ: Հետևաբար աշխատավարձի վճարման կապակցությամբ հաշվարկված և փոխանցված եկամտային հարկի գումարը չի հանդիսանում բանկի՝ որպես հարկ վճարողի սեփական հարկային պարտավորության մարում և չի կարող ուղղվել բանկի նախկինում առաջացած հարկային պարտավորություններին: Այդ գումարը կազմում է համապատասխան աշխատավարձային պահանջի մարման բաղկացուցիչ մասը և ենթակա է ձևակերպման որպես տվյալ ֆիզիկական անձանց եկամտային հարկի վճար: Լուծարման գործընթացում գտնվող բանկի պարտավորությունների, այդ թվում՝ հարկային պարտավորությունների մարման հերթականությունը որոշվում է բանկերի սնանկությունը կարգավորող հատուկ օրենքով: Բանկի՝ մինչև սնանկ ճանաչվելը ծագած սեփական հարկային պարտավորությունները ենթակա են մարման միայն այդ օրենքով սահմանված հերթում, իսկ ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված միասնական հաշվից հարկային պարտավորությունների մարման ընդհանուր հերթականությունը չի կարող կիրառվել այնպես, որ խախտվի բանկի պարտատերերի պահանջների բավարարման հատուկ հերթականությունը:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/8623/05/21 վարչական գործով որոշում.

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ և 14-րդ հոդվածների միատեսակ կիրառությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, հարկ է համարում անդրադառնալ իրավաբանական անձի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի իմաստով վարչական պատասխանատվության սուբյեկտ հանդիսանալու հարցին:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նախկինում արտահայտած այն իրավական դիրքորոշումը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի իմաստով իրավաբանական անձը վարչական պատասխանատվության ինքնուրույն սուբյեկտ չէ, զարգացրել է այդ դիրքորոշումը՝ հաղթահարելով նույն օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասերի միջև առկա իրավական կոլիզիան: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի ընդհանուր մասի կարգավորումներից բխում է, որ վարչական իրավախախտման պարտադիր հատկանիշներից է սուբյեկտի կողմը՝ մեղքը, որն արտահայտում է անձի հոգեբանական վերաբերմունքը կատարված արարքի և դրա հետևանքների նկատմամբ: Քանի որ իրավաբանական անձը չի կարող ունենալ նման հոգեբանական վերաբերմունք, այն չի կարող դիտվել վարչական իրավախախտման սուբյեկտ, նույնիսկ այն դեպքերում, երբ օրենսգրքի հատուկ մասի առանձին հոդվածներում որպես պատասխանատվության սուբյեկտ նշված է իրավաբանական անձը: Վճռաբեկ դատարանը, կիրառելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կոլիզիայի հաղթահարման կանոնները, եզրակացրել է, որ նման դեպքերում նախապատվությունը պետք է տրվի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի ընդհանուր մասի կարգավորումներին: Այդ կապակցությամբ դատարանը մեկնաբանել է, որ հատուկ մասում իրավաբանական անձին որպես պատասխանատվության սուբյեկտ նախատեսելու նպատակն այն չէ, որ վարչական պատասխանատվության ենթարկվի հենց իրավաբանական անձը, այլ այն, որ պատասխանատվության ենթարկվի իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը կամ այն պաշտոնատար անձը, որի վրա օրենքով, կանոնադրությամբ, իրավաբանական անձի այլ ակտով կամ աշխատանքային պայմանագրով դրված է եղել համապատասխան պարտականության կատարումը, և որի մեղավոր վարքագծի արդյունքում է թույլ տրվել իրավախախտումը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ այն բոլոր դեպքերում, երբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հատուկ մասով որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ նշված է իրավաբանական անձը, վարչական պատասխանատվության պետք է ենթարկվի ոչ թե իրավաբանական անձը, այլ նրա համապատասխան գործադիր մարմնի ղեկավարը՝ վարչական իրավախախտման բոլոր պարտադիր հատկանիշների, այդ թվում՝ մեղքի առկայության պայմաններում:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/7405/05/24 վարչական գործով որոշում.

- **Քննարկման ենթակա հարցը.** Սույն գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցադրմանը. «Ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում, շենքում կամ շինությունում կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող ուրիշ շարժական գույքը հեռացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ֆիզիկական անձի կամ ֆիզիկական անձի շարժական գույքի ներխուժումը վերացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ազատելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» ՀՀ

-
- կառավարության 10.05.2007 թվականի թիվ 797-Ն որոշումն արդյո՞ք կիրառելի է նաև իրավաբանական անձի ներխուժումը կանխելու կամ վերացնելու դեպքում:
 - Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, զարգացնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդվածի և ՀՀ կառավարության թիվ 797-Ն որոշման կիրառման վերաբերյալ իրավական մոտեցումները, արձանագրել է, որ նշված որոշումը կիրառելի է ոչ միայն ֆիզիկական, այլև իրավաբանական անձի կողմից իրականացված ներխուժման դեպքերում: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդվածը ներխուժման հասկացությունը ձևակերպելիս օգտագործում է «անձ», «ոչ ոք», «այլոք», «ուրիշ» եզրույթները՝ առանց տարբերակելու, թե ներխուժումն իրականացվել է ֆիզիկական, թե իրավաբանական անձի կողմից: Հետևաբար, օրենսդիրը նպատակ է ունեցել ապահովելու օրինական տիրապետողի գույքի հավասար պաշտպանությունը ցանկացած անձի կողմից կատարված ներխուժումից: Նույն մոտեցումն է ընկած նաև ՀՀ կառավարության թիվ 797-Ն որոշման հիմքում, որը, որպես օրենսգրքի 203-րդ հոդվածի կատարման ապահովման նպատակով ընդունված ենթաօրենսդրական ակտ, չի կարող մեկնաբանվել այնպես, որ դրա կիրառությունը սահմանափակվի միայն ֆիզիկական անձանց կողմից կատարված ներխուժումով: Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ իրավաբանական անձի ներխուժումը գործնականում դրսևորվում է նրա տնօրենի, աշխատակիցների կամ այլ լիազորված անձանց ֆիզիկական ներկայության միջոցով: Այդ պատճառով իրավաբանական անձի նկատմամբ թիվ 797-Ն որոշման կիրառման դեպքում դրանով նախատեսված գործողությունները պետք է իրականացվեն իրավաբանական անձի տնօրենի, նրան փոխարինող կամ լիազորված անձի նկատմամբ, իսկ վերջիններս պարտավոր են ապահովել իրենց աշխատակիցների և շարժական գույքի հեռացումը տվյալ տարածքից:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/8198/05/24 վարչական գործով որոշում.

- Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանը անդրադարձել է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու հարցը լուծելու իրավական խնդրին, այն դեպքում, երբ դատավարության մասնակցի կողմից ներկայացուցչին տրված լիազորագրում առկա է հատուկ նշում ծանուցումներն ու դատավարական փաստաթղթերը ստանալու լիազորությունը ներկայացուցչին վերապահելու մասին:
- Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ եթե դատավարության մասնակիցը խնդրել է դատավարական փաստաթղթերը հանձնել իր ներկայացուցչին կամ ներկայացուցչին տրված լիազորագրով նրան հատուկ վերապահել է ծանուցումները, դատավարական փաստաթղթերը և դատական ակտերը ստանալու իրավասություն, ապա դատարանը պարտավոր է դրանք ուղարկել հենց ներկայացուցչին: Այդ դեպքում նույն փաստաթղթերը նաև դատավարության մասնակցին ուղարկելու պարտականություն դատարանը չունի: Վճռաբեկ դատարանը նշել է, որ նման դեպքերում բողոքարկման ժամկետի հաշվարկման և դրա բացթողման պատճառների հարգելիությունը գնահատելիս հիմք պետք է ընդունվի ոչ թե դատավարության մասնակցի, այլ ներկայացուցչի կողմից դատավարական փաստաթղթերը ստանալու օրը: Հետևաբար այն հանգամանքը, որ դատավարական փաստաթուղթը նաև ուղարկվել է դատավարության մասնակցին և վերջինս այն ստացել է ավելի վաղ, ինքնին չի կարող ազդել բողոքարկման ժամկետի հաշվարկի կամ հիմք հանդիսանալ ժամկետի բացթողման պատճառները ոչ հարգելի գնահատելու համար: Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ եթե լիազորագրով դատավարական փաստաթղթերը ստանալու իրավասությունը հատուկ վերապահված է ներկայացուցչին, սակայն դատարանը դատական ակտն ուղարկել է միայն դատավարության մասնակցին, ապա դատարանի կողմից պատշաճ ծանուցման պարտականությունը չի համարվում կատարված: Դատարանն ընդգծել է, որ ներկայացուցչին դատավարական փաստաթղթերը ստանալու և բողոքարկելու լիազորություն վերապահելով՝ դատավարության մասնակիցն իր կամքն է արտահայտում դատավարությանը ներկայացուցչի միջոցով մասնակցելու վերաբերյալ: Հետևաբար բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը ծագում է այն պահից, երբ դատավարական փաստաթուղթը հասանելի է դառնում լիազորված ներկայացուցչին, և բողոքարկման ժամկետի վերականգնման հարցը պետք է գնահատվի հենց այդ պահի հաշվառմամբ:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/4076/05/23 վարչական գործով որոշում.

- Քննարկման ենթակա հարցը.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ իրավունքը զարգացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը անդրադարձել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման առանձնահատկություններին:
- Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման կարգը կախված է իրավախախտման բնույթից: Եթե իրավախախտումը հնարավոր է հայտնաբերել միայն դրա կատարման վայրում, ապա արձանագրությունը, որպես ընդհանուր կանոն, կազմվում է հենց այդ վայրում՝ ենթադրյալ իրավախախտի մասնակցությամբ: Եթե ենթադրյալ իրավախախտը բացակայում է, ապա արձանագրությունը կարող է կազմվել այլ վայրում միայն այն դեպքում, երբ նա պատշաճ ձևով ծանուցվել է արձանագրության կազմման վայրի և ժամանակի մասին, սակայն չի ներկայացել: Եթե իրավախախտումը հնարավոր է հայտնաբերել բացառապես փաստաթղթային ուսումնասիրության միջոցով, ապա արձանագրությունը կարող է կազմվել իրավախախտման վայրից դուրս՝ կրկին պայմանով, որ ենթադրյալ իրավախախտը պատշաճ ձևով ծանուցված է արձանագրության կազմման վայրի և ժամանակի մասին: Վճռաբեկ դատարանը նաև

-
- սահմանել է, որ ծանուցումը կարող է համարվել արդյունավետ միայն այն դեպքում, երբ այն հասցեատիրոջը հանձնվել է արձանագրության կազմման օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ, որպեսզի վերջինս իրական հնարավորություն ունենա մասնակցելու արձանագրության կազմմանը և իրականացնելու իր պաշտպանության իրավունքը: Արձանագրությունը այլ վայրում ենթադրյալ իրավախախտի բացակայությամբ կարող է կազմվել միայն այն դեպքում, երբ վարչական մարմնի տրամադրության տակ առկա է նրա պատշաճ ծանուցված լինելու փաստը հաստատող թույլատրելի ապացույց:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ2/0096/05/24 վարչական գործով որոշում.

- **Քննարկման ենթակա հարցը.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ իրավունքը զարգացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը անդրադարձել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման առանձնահատկություններին՝ վերահաստատելով նաև նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Սույն գործում վճռաբեկ դատարանը, զարգացնելով իր դիրքորոշումը, արձանագրել է, որ եթե վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվել է վարչական իրավախախտման կատարման վայրից դուրս, գործի նյութերում պետք է առկա լինեն վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը վարչական իրավախախտումը կատարելու վայրում կազմելու անհնարինությունը հաստատող ապացույցներ: Այդպիսի ապացույցների բացակայության պայմաններում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը վարչական իրավախախտման կատարման վայրից դուրս կազմելու իրավական հնարավորությունը հաստատված համարվել չի կարող:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/8983/05/19 վարչական գործով որոշում.

- **Քննարկման ենթակա հարցը.** Սույն գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է սնանկ ճանաչված անձի դատական պաշտպանության իրավունքի, մասնավորապես, բողոքարկման իրավունքի իրացման առանձնահատկություններին:
 - **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը նշել է, որ սնանկ ճանաչված անձը կարող է անձամբ իրացնել դատարանի մատչելիության, այդ թվում՝ բողոքարկման իր իրավունքը բոլոր այն գործերով, որոնք նպատակաուղղված չեն պարտապանի գույքի պահպանմանը կամ պարտատերերի շահերի պաշտպանությանը: Այդպիսի դեպքերում սնանկության կառավարչի համաձայնությունը բողոք ներկայացնելու պարտադիր նախապայման չէ: «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածը կարգավորում է միայն պարտապանի գույքի տնօրինման հետ կապված հարաբերությունները և չի տարածվում դատավարական իրավունքների իրացման վրա, իսկ կառավարչի՝ որպես ի պաշտոնե ներկայացուցչի լիազորությունը չի բացառում պարտապանի՝ օրենքով թույլատրված դեպքերում անձամբ բողոքարկելու իրավունքը:
-

Քրեական գործերով իրավական դիրքորոշումներ

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ1/0048/13/24 քրեական գործով որոշում.

- **Քննարկման ենթակա հարցը.** Սույն գործում Վճռաբեկ դատարանը անդրադարձել է ՀՀ քրեական օրենսգրքի 257-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված համակարգչային հափշտակության հանցակազմի հատկանիշներին:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Սույն գործով վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ համակարգչային հափշտակությունը պետք է սահմանազատել գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը կամ համակարգը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով կատարված գողությունից: Եթե համակարգչային համակարգն օգտագործվում է ըստ իր նպատակային նշանակության, և հափշտակությունն իրականացվում է համակարգչային տվյալների միջոցով համակարգի ծրագրային գործառնություններին հասանելիություն ստանալով, ապա արարքը համակարգչային հափշտակություն է: Եթե սարքը չի օգտագործվում ըստ նպատակային նշանակության, այլ ֆիզիկապես ոչնչացվում կամ վնասվում է դրա ներսում գտնվող նյութական արժեքներին տիրանալու համար, արարքը կարող է որակվել որպես ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված գողություն: Բանկոմատը, որպես ծրագրի հիման վրա տվյալների ավտոմատ մշակում և ֆինանսական գործառնություններ իրականացնող ինքնասպասարկման սարք, համակարգչային համակարգ է: Հետևաբար, առանց իրավաչափ թույլտվության այլ անձի մուտքանունը և գաղտնաբառը բանկոմատի համապատասխան հավելվածում մուտքագրելով և նրա հաշվին հասանելիություն ստանալը և այնտեղից դրամական միջոցներ հափշտակելը համապատասխանում է համակարգչային հափշտակության հանցակազմին:

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՀԿԴ/0331/06/25 քրեական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Սույն գործով Վճռաբեկ դատարանը անդրադարձել է այն հարցին, թե կարող է արդյոք խափանման միջոցի կիրառման հարցը լուծելիս դատարանը հիմնավոր կասկածի առկայությունը գնահատելիս բացառել օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված նյութերի օգտագործումը: Հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 10-րդ մասին:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը վերահաստատել է, որ խափանման միջոցի կիրառման հարցի քննության շրջանակներում դատարանը չի կարող անդրադառնալ մեղադրանքի էությանը կամ գնահատել ապացույցների թույլատրելիությունն ու բավարարությունը նույն ծավալով, ինչպես գործն ըստ էության քննելիս, քանի որ այդ հարցերը վերաբերում են արդարադատության իրականացման փուլին: Հիմնավոր կասկածի ստուգման շրջանակներում դատարանը պետք է պարզի միայն, թե արդյոք առկա են անձի հնարավոր առնչությունը ենթադրյալ հանցագործությանը մատնանշող փաստական տվյալներ՝ առանց կանխորոշելու մեղավորության հարցը: Վճռաբեկ դատարանը հստակեցրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված՝ արտավարության փաստաթղթերի օգտագործման սահմանափակումը չի կարող մեկնաբանվել որպես դրանց օգտագործման բացարձակ արգելք խափանման միջոցի կիրառման դատական երաշխիքների վարույթում հիմնավոր կասկածի առկայությունը գնահատելիս: Այդ փուլում նման նյութերը կարող են հաշվի առնվել մեղադրյալի հնարավոր առնչությունը ենթադրյալ հանցագործությանը գնահատելու նպատակով, իսկ դրանց թույլատրելիության և մեղադրանքի հիմնավորման համար օգտագործելիության հարցերը ենթակա են լուծման քրեական վարույթի հետագա փուլերում: Վճռաբեկ դատարանը նաև պարզաբանել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված սահմանափակումները վերաբերում են միայն դատարանի թույլտվությամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված արտավարության փաստաթղթերին:

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/0852/11/22 քրեական գործով որոշում.

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանը անդրադարձել է այն հարցին, թե իրավաչափ է արդյոք իրեղեն ապացույց ճանաչված անշարժ գույքի պահպանության նպատակով, առանց օրենքով նախատեսված գույքի արգելադրման ընթացակարգի կիրառման, Կադաստրի կոմիտեին գրությամբ տվյալ գույքի նկատմամբ գործարքների կատարումն արգելելը:

-
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ իրեղեն ապացույց ճանաչելը և գույքի արգելադրումը տարբեր քրեադատավարական ինստիտուտներ են, որոնք, թեև երկուսն էլ կարող են հանգեցնել սեփականության իրավունքի սահմանափակման, հետապնդում են տարբեր նպատակներ և ենթակա են տարբեր իրավակարգավորման: Իրեղեն ապացույց ճանաչելը նպատակ ունի ապահովել քրեական վարույթում ապացուցման ենթակա հանգամանքների պարզումը, մինչդեռ գույքի արգելադրումը կիրառվում է քաղաքացիական հայցի, գույքի հնարավոր բռնագրավման կամ բռնագանձման, ինչպես նաև վարության ծախսերի հատուցումն ապահովելու նպատակով: Այդ պատճառով այդ ինստիտուտների համար օրենսդիրը նախատեսել է տարբեր իրավական հիմքեր, կիրառման ընթացակարգեր և սեփականության իրավունքի սահմանափակման տարբեր դատավարական երաշխիքներ: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը հստակեցրել է, որ իրեղեն ապացույց ճանաչված գույքի պահպանությունը կարող է իրականացվել միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված միջոցներից որևէ մեկի կիրառմամբ: Քրեական դատավարության օրենսգիրքը վարույթն իրականացնող մարմնին չի վերապահում իրեղեն ապացույցի պահպանության նպատակով Կադաստրի կոմիտեին գրությամբ տվյալ անշարժ գույքի նկատմամբ գործարքների կատարումն արգելելու լիազորություն: Նման սահմանափակումը փաստացի հանգեցնում է գույքի տնօրինման իրավունքի սահմանափակման, սակայն կիրառվում է առանց գույքի արգելադրման համար օրենքով նախատեսված ընթացակարգի և դատական վերահսկողության: Վճռաբեկ դատարանը նաև ընդգծել է, որ եթե վարույթն իրականացնող մարմինը գտնում է, որ գույքը հետագայում կարող է ծառայել հնարավոր բռնագրավումը, բռնագանձումը, պատճառված վնասի կամ վարության ծախսերի հատուցումն ապահովելու նպատակներին, ապա պետք է կիրառի ոչ թե իրեղեն ապացույցի պահպանության միջոցներ, այլ օրենքով սահմանված կարգով գույքի արգելադրում: Հակառակ դեպքում սեփականության իրավունքի սահմանափակումը կատարվում է այն դատավարական երաշխիքները չըջանցելով, որոնք օրենսդիրը նախատեսել է հենց գույքի արգելադրման համար:

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՀԿԴ/0133/15/24 քրեական գործով որոշում.

- **Քննարկման ենթակա հարցը.** Սույն գործով Վճռաբեկ դատարանը անդրադարձել է այն հարցերին, թե ինչ փաստական տվյալներով պետք է հիմնավորվի մեղադրյալի գույքն օտարելու, թաքցնելու, վնասելու, ոչնչացնելու կամ սպառելու վերաբերյալ ողջամիտ ենթադրությունը՝ գույքի արգելադրումը կիրառելիս, և ով է իրավասու որոշելու արգելադրման ենթակա գույքի շուկայական արժեքը, և արդյո՞ք քննիչը կարող է ինքնուրույն գնահատել այն:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով գույքի արգելադրման դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ներկայացնել այնպիսի կոնկրետ փաստական տվյալներ, որոնք երրորդ անձի մոտ կարող են ձևավորել ողջամիտ ենթադրություն, որ մեղադրյալը կարող է օտարել, թաքցնել, վնասել, ոչնչացնել կամ սպառել իր գույքը՝ վտանգելով հնարավոր վնասի կամ վարության ծախսերի հետագա հատուցումը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հստակեցրել է, որ այդ հիմքով գույքի արգելադրման համար պարտադիր չէ ապացուցել մեղադրյալի՝ վնասի հատուցումից խուսափելու դիտավորությունը կամ նախկինում գույքն օտարելու փորձ կատարած լինելը: Սակայն միայն այն հանգամանքը, որ անձը ձեռք է բերել մեղադրյալի դատավարական կարգավիճակ, ինքնին չի կարող բավարար հիմք հանդիսանալ նրա գույքը արգելադրելու համար. անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում ներկայացնել գույքի տնօրինման հետ կապված ռիսկը հիմնավորող փաստական տվյալներ: Վճռաբեկ դատարանը նաև ձևավորել է իրավական դիրքորոշում արգելադրման ենթակա գույքի արժեքի որոշման վերաբերյալ՝ արձանագրելով, որ քննիչը չի հանդիսանում գույքի շուկայական արժեքը գնահատելու իրավասություն ունեցող սուբյեկտ: Անշարժ և շարժական գույքի շուկայական արժեքը պետք է որոշվի օրենքով նախատեսված կարգով՝ այդ լիազորությունն ունեցող գնահատողի կողմից, իսկ քննիչը չի կարող սեփական գնահատմամբ, կադաստրային արժեքով կամ առցանց հայտարարությունների հիման վրա ինքնուրույն որոշել գույքի շուկայական արժեքը: Նման կարգով կատարված գնահատումը չի համապատասխանում քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին:

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ1/0815/06/24 քրեական գործով որոշում.

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանը անդրադարձել է այն հարցին, թե իրավաչափ է արդյոք հատուկ վերանայման բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելը, եթե բողոքաբերը բարեխղճորեն ձեռնարկել է անհրաժեշտ գործողություններ դատական ակտը ստանալու օրը հավաստող ապացույց ձեռք բերելու համար, սակայն այն չի կարողացել ստանալ իրենից անկախ պատճառներով:
-

- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ այն դեպքերում, երբ դատական ակտի կայացման և դրա բողոքարկման միջև անցել է երկար ժամանակ, բողոք բերող անձը պարտավոր է հիմնավորել, որ պահպանել է բողոքարկման ժամկետը՝ ներկայացնելով դատական ակտը ստանալու օրը հավաստող ապացույց: Սակայն եթե անձը բարեխղճորեն ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ և ողջամիտ գործողությունները նման ապացույց ձեռք բերելու համար, սակայն այն չի կարողացել ստանալ իրենից անկախ պատճառներով, ապա նա չպետք է կրի վարույթն իրականացնող մարմնի գործողությունների կամ անգործության բացասական հետևանքները: Նման իրավիճակում դատարանը պարտավոր է գնահատել անձի կողմից ձեռնարկված գործողությունները և չի կարող բացառապես ապացույցի բացակայության հիմքով բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԿԴ/0091/01/23 քրեական գործով որոշում.

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանը անդրադարձել է այն հարցին, թե արդյոք տուժողի հետ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատման սահմանափակումը կիրառելի է, եթե անձը մեկ այլ քրեական գործով նույն հիմքով ազատվել է արդեն այն բանից հետո, երբ կատարել էր տվյալ գործով իրեն վերագրվող հանցանքը:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, զարգացնելով Մարզպետ Բեգլարյանի գործով արտահայտված իրավական դիրքորոշումները, արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված սահմանափակումը («նախկինում հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նույն հիմքով կրկին ազատվել») կիրառելի է միայն այն դեպքում, երբ անձը տվյալ հանցանքը կատարելու պահին արդեն իսկ նախկինում հաշտության հիմքով ազատված է եղել քրեական պատասխանատվությունից: Վճռաբեկ դատարանը նշել է, որ այդ սահմանափակման նպատակը քրեական պատասխանատվությունից ազատելու խրախուսական ինստիտուտի չարաշահումը կանխելն է: Օրենսդիրը մեկ անգամ անձին հնարավորություն է տալիս հաշտության հիմքով ազատվել քրեական պատասխանատվությունից՝ ակնկալելով, որ վերջինս կհրաժարվի հետագա հանցավոր վարքագծից: Հետևաբար նույն հիմքով կրկին ազատելու արգելքը կարող է կիրառվել միայն այն դեպքերում, երբ անձը, արդեն օգտվելով այդ հնարավորությունից և գիտակցելով դրա հետևանքները, դրանից հետո նորից կատարում է հանցանք: Եթե, սակայն, տվյալ գործով վերագրվող հանցանքը կատարվել է մինչև հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ դատական ակտի կայացումը, ապա ՔՕ 82-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված սահմանափակումը կիրառելի չէ, և անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից տուժողի հետ հաշտության հիմքով:

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/1296/01/22 քրեական գործով որոշում.

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանը անդրադարձել է այն հարցին, թե ինչպես պետք է քրեական վարույթում որոշվի հափշտակված գույքի արժեքը և հանցագործությամբ պատճառված գույքային վնասի չափը, եթե գործով բացակայում են գույքի շուկայական արժեքը հավաստող բավարար ապացույցներ:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ հափշտակությամբ պատճառված գույքային վնասի չափը քրեական վարույթով ապացուցման ենթակա հանգամանք է և պետք է հաստատվի վերաբերելի, թույլատրելի, արժանահավատ և բավարար ապացույցների համակցությամբ: Դատարանը չի կարող վնասի չափի վերաբերյալ իր հետևությունները կառուցել ենթադրությունների, գնահատողական դատողությունների կամ առանձին ապացույցների մեխանիկական համադրման վրա: Վճռաբեկ դատարանը հստակեցրել է, որ, որպես կանոն, հափշտակված գույքի արժեքը պետք է որոշվի դատաապրանքագիտական փորձաքննությամբ սահմանված շուկայական արժեքի հիման վրա: Սակայն եթե նման փորձաքննություն հնարավոր չէ կատարել, դա վարույթն իրականացնող մարմնին և դատարանին չի ազատում գույքի իրական արժեքը պարզելու պարտականությունից, որը պետք է իրականացվի գործով ձեռք բերված այլ վերաբերելի և արժանահավատ ապացույցների գնահատման միջոցով: Սույն գործով Վճռաբեկ դատարանը գտել է, որ ստորադաս դատարաններն անհիմն են մերժել տուժողի ցուցմունքները՝ դրանք պայմանավորելով միայն նրա շահագրգռվածությամբ, առանց հիմնավորելու, թե այդ շահագրգռվածությունն ինչպես է ազդել ցուցմունքների արժանահավատության վրա: Միաժամանակ դատարանները հափշտակված գույքի արժեքը որոշելիս հիմք են ընդունել բացառապես մեղադրյալի կողմից ոսկյա շղթան որպես ջարդոն վաճառելու գնի վերաբերյալ հայտնած տվյալները՝ դրանք մեխանիկորեն համադրելով ոսկու շուկայական փոխարժեքի հետ, մինչդեռ ոսկյա զարդի շուկայական արժեքը և այն որպես ջարդոն վաճառելու գինը նույնական չեն: Վճռաբեկ դատարանը նաև ընդգծել է, որ տվյալ գործով առկա էր հափշտակված շղթայի պահպանված հատվածը, ինչը հնարավորություն էր տալիս համապատասխան փորձաքննությամբ պարզելու շղթայի հնարավոր քաշը, հյուսվածքի տեսակը և շուկայական արժեքը: Նման պայմաններում դատարանները պարտավոր էին ձեռնարկել անհրաժեշտ դատավարական միջոցներ՝ գույքային վնասի չափը պատշաճ պարզելու համար:

Սահմանադրական դատարանի որոշումներ

ՍԴՈ-1834՝ Քննարկ Սահակյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

- Քննության շրջանակը.** Արդյո՞ք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով չի նախատեսում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տարբեր դատավորների վարույթներում գտնվող մի քանի միատեսակ քաղաքացիական գործերը մեկ վարույթում միացնելու հնարավորություն այն դեպքում, երբ տվյալ գործերով գործին մասնակցող անձինք լրիվ կամ մասնակի համընկնում են, դրանց միջև առկա է փոխադարձ կապ, իսկ համատեղ քննությունը կարող է ապահովել գործերի առավել արագ և արդյունավետ լուծումը, համահունչ է Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին՝ համակցված 75-րդ հոդվածի հետ:
- Սահմանադրական դատարանի դիրքորոշումը.** Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ փոխկապակցված քաղաքացիական գործերի մեկ վարույթում միացման ինստիտուտը նպատակաուղղված է դատավարական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, գործերի արագ և համակողմանի քննությանը, միևնույն փաստական հանգամանքներին տարբեր դատավորների կողմից իրարամերժ գնահատականներ տալու և հակասական դատական ակտեր կայացնելու ռիսկի բացառմանը: Այդպիսի գործերի փոխկապակցվածությունը կարող է դրսևորվել կողմերի լրիվ կամ մասնակի համընկնմամբ, վիճելի իրավահարաբերությունների, հայցապահանջների կամ դրանց հիմքում ընկած փաստական հանգամանքների ընդհանրությամբ, ապացուցողական բազայի նույնությամբ կամ այն հանգամանքով, որ մեկ պահանջի լուծումը կարող է կանխորոշիչ նշանակություն ունենալ մյուսի համար: Սահմանադրական դատարանը նշել է, որ վարչական և քրեական դատավարություններում, ինչպես նաև հակակոռուպցիոն դատարանի տարբեր դատավորների վարույթներում գտնվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով օրենսդիրը նախատեսել է փոխկապակցված գործերը մեկ վարույթում միացնելու կառուցակարգ: Մինչդեռ քաղաքացիական դատավարության ընդհանուր կարգավորման շրջանակում գործերի միացման հնարավորությունը սահմանափակված է նույն դատավորի վարույթում գտնվող գործերով: Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ այդ սահմանափակումը չարդարացված, նեղ և ձևական մոտեցում է, որը կարող է հանգեցնել դատավարական ընթացակարգերի անհամաչափ սահմանափակման, գործերի քննության ձգձգման, իրավական որոշակիության և դատական ակտերի բովանդակային միասնականության խաթարման: Սահմանադրական դատարանը շեշտել է նաև, որ Սահմանադրության 75-րդ հոդվածը պարտադրում է օրենսդիրն ստեղծել հիմնական իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տարբեր դատավորների վարույթներում գտնվող փոխկապակցված քաղաքացիական գործերը միացնելու կառուցակարգի բացակայությունը կարող է հանգեցնել արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների խախտման: Երեխայի շահերին առնչվող վեճերով այդպիսի գործերի տարանջատված քննությունը կարող է նաև վտանգել երեխայի լավագույն շահերի առաջնահերթ պաշտպանության սկզբունքի իրականացումը:
- Սահմանադրական դատարանի եզրակացությունը.** Սահմանադրական դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով չի նախատեսում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տարբեր դատավորների վարույթներում գտնվող մի քանի միատեսակ քաղաքացիական գործերը մեկ վարույթում միացնելու հնարավորություն այն դեպքում, երբ տվյալ գործերով գործին մասնակցող անձինք լրիվ կամ մասնակի համընկնում են, և դրանց միջև առկա է փոխադարձ կապ, ճանաչել է Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին՝ համակցված 75-րդ հոդվածի հետ, հակասող և անվավեր: Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը ենթակա է վերանայման նոր հանգամանքի հիմքով:

ՍԴՈ-1830՝ Արմանուշ Հարությունյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասի՝ հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

- Քննության շրջանակը.** Արդյո՞ք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությունը, որի համաձայն՝ տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ պահանջները կարող են ներկայացվել միայն ընդհանուր հայցային վարույթի կարգով, չի խախտում Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը՝ Սահմանադրության 60-րդ հոդվածով ամրագրված սեփականության իրավունքի պաշտպանության համատեքստում:

-
- **Սահմանադրական դատարանի դիրքորոշումը.** Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք ձեռք բերելու հավակնություն ունեցող անձը հատուկ վարույթի կարգով կարող է պահանջել այդ գույքը տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ որպես սեփական գույք տիրապետելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատում: Այդ փաստերի միաժամանակյա առկայությունը հանգեցնում է տվյալ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագմանը: Այն դեպքում, երբ նյութաիրավական վեճը բացակայում է, ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման վերաբերյալ պահանջը չի կարող քննվել ընդհանուր հայցային վարույթի կարգով, իսկ դրա դատական պաշտպանության կառուցակարգը պետք է ապահովվի հատուկ վարույթի շրջանակներում՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման միջոցով: Սահմանադրական դատարանը նշել է, որ դատարան դիմող անձի պահանջի ձևակերպման ոչ բավարար հստակությունը դիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելիս ինքնին չի կարող դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման հիմք դառնալ: Երբ դիմումի բովանդակությունից ակնհայտ է, որ անձը փաստացի պահանջում է ձեռքբերման վաղեմության համար օրենքով նախատեսված պարտադիր պայմանների միաժամանակյա առկայության հաստատում, դատարանը պետք է առաջնորդվի դիմումի իրական նպատակով և նյութական պահանջի էությամբ, այլ ոչ պահանջի բառացի ձևակերպմամբ: Դատավարական ձևի գերակայությունը նյութական իրավունքի նկատմամբ չի կարող համարվել արդարացված սահմանափակում: Հետևաբար՝ նույնիսկ այն դեպքում, երբ պահանջը ձևակերպված է որպես ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման պահանջ, դատարանը պարտավոր է գնահատել դրա բովանդակությունը և, եթե այն ըստ էության վերաբերում է համապատասխան իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատմանը, ապահովել դրա քննությունը հատուկ վարույթի կարգով:
 - **Սահմանադրական դատարանի եզրակացությունը.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերով դատարան դիմող անձի պահանջի ձևակերպման ոչ բավարար հստակությունը դիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելիս ինքնին չի կարող դառնալ դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման հիմք, և դատարանը պետք է առաջնորդվի դիմումի բուն էությամբ: Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը ենթակա է վերանայման նոր հանգամանքի հիմքով:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ